Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակի նախաձեռնութեամբ, 2025թ. իրականացուեցաւ «Հայ Ուսանողութիւնը Արցախի Համար» հետազօտութիւններու մրցանքի երկրորդ թողարկումը, որուն մասնակցեցան մի քանի տասնեակ ուսանողներ աշխարհի տարբեր երկիրներէ: Ծրագրին հիմնական նպատակն է համախմբել հայ ուսանողութիւնը Արցախահայութեան վերադարձի իրաւունքի շուրջ, նկատի ունենալով Արցախահայութեան վերադարձի իրաւունքի այժմէականութիւնը, եւ անհրաժեշտութիւնը տեսնելով հայ ուսանողութեան մասնագիտական ներուժը ծառայեցնելու այս հիմնահարցին: Կը ներկայացնենք մրցանքին երրորդ կրթաթոշակին արժանացած ուսանողները՝ Վիկա Կաֆեանի եւ Էրիկա Կաֆեանի (Արցախ) հետազօտութեան ամփոփագիրը, նիւթ՝ «Վերադարձի իրաւունքի ծիրին մէջ Արցախի պատմամշակութային ժառանգութեան պահպանութեան կարեւորութիւնը եւ գործնական հնարաւորութիւնները», Խորհրդատու՝ Լեռնիկ Յովհաննիսեան, Արցախի Հանրապետութեան մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ զբօսաշրջութեան նախկին նախարար:

<u>Վիկա Ալեքսանդրի Կաֆեանը եւ Էրիկա Ալեքսանդրի Կաֆեանը</u> ծնուել են Արցախի Հանրապետութեան Մարտակերտի շրջանի Վանք գիւղում:

2012 թուականին ընդունուել են Վանքի Գուրգէն Հայրապետեանի անուան միջնակարգ դպրոցը: 2023 թուականի ողբերգական իրադարձութիւններից եւ Արցախի բնակչութեան բռնի տեղահանութիւնից յետոյ, նրանք տեղահանուել են իրենց հայրենիքից եւ բնակութիւն հաստատել Հայաստանի Հանրապետութեան Կոտայքի մարզի Չարենցաւան քաղաքում:

2023–2024 ուսումնական տարում շարունակել եւ աւարտել են իրենց միջնակարգ կրթութիւնը Չարենցաւանի Մեսրոպ Մաշտոցի անուան դպրոցում:

2024 թուականին ընդունուել են Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի Հաշուապահական Հաշուառման եւ Հարկման Ֆակուլտետ՝ «Հաշուառում եւ Աուդիտ» մասնագիտութեամբ, որտեղ ներկայումս երկրորդ կուրսի ուսանողներ են:

Համառօտ նկարագրութիւն
Վերադարձի իրաւունքի ծիրէն ներս Արցախի պատմամշակոյթային ժառանգութեան պահպանութեան կարեւորութիւնը և գործնական հնարաւորութիւնները

Հայկական մշակութային ժառանգութեան զանգուածային ոչնչացումը կանխամտածուած իրականացուել է 20-րդ դարում: Բարբարոսութեան են ենթարկուել արեւմտահայ մշակութային արժէքներու մեծ մասը՝ եկեղեցիները, վանքերը, խաչքարերը

եւ այլ յուշարձաններ։ 1912–1913 թթ. Կ. Պոլսի հայկական պատրիարքարանի պաշտօնական ցուցակով Օսմանան կայսրութիւնում հայ եկեղեցիների եւ վանքերի թիւը գերազանցում էր 2000ը, որոնց մեծ մասը 20-րդ դարի սկզբին թուրքական իշխանութիւնների կողմից ցեղասպանութեան ընթացքում թալանուեց, այրուեց եւ աւերուեց։ ՅՈՒՆԵՍԿՕՅի 1974 թ. տուեալներով՝ կանգուն մնացած 913 հայկական յուշարձաններից 464-ն անհետացել են, 252-ը աւերակ, 197-ն նորոգման կարիք ունեն։ Թուրքիայում և Ազրպէյճանում մշակութային էթնիկ ոչնչացման նպատակը հայ ժողովրդի կոտորածն ու տարածքների իւրացումն է, ինչպէս նաև մշակութային արժէքների ոչնչացումը։ Այս քաղաքականութիւնը ցեղասպանական ծրագրի մասն է՝ որպէսզի նշուած տարածքներում հայերի մշակութային հետք չմնայ։ Արցախի ժառանգութեան պահպանութիւնը այսօր առաջնային մարտահրաւէր է Հայաստանի, Արցախի եւ ամբողջ աշխարհի հայութեան համար։ Ազրպէյճանում հայկական ժառանգութեան բռնահիւրացումը դարձել է պետական քաղաքականութեան մաս, ներառելով ոչ միայն ֆիզիքական ոչնչացում, այլեւ ձեւափոխում, վերանուանում եւ պատմական իրողութիւնների խեղաթիւրում։ Վերջնանպատակն է տարածքային պատկանելութիւնը օրինականացնել՝ ստեղծելով պատրանք, համաձայն որի տարածաշրջանում ազրպէյճանցիների նախնիները դարեր շարունակ ապրել են՝ անտեսելով հայերի բազմադարեան գոյութեան փաստերն ու մշակութային ժառանգութիւնը (մ.թ. 6-րդ դարից մինչեւ մեր օրերը)։ Արցախի Հանրապետութեան քաղաքականապէս չճանաչուած լինելը, պատերազմական իրավիճակը, անվտանգութեան գերակայ խնդիրները, ինչպէս նաև միջազգային համագործակցութիւնից եւ կառոյցներից դուրս մնալը մշտապէս լուրջ խոչընդոտներ են ստեղծել մշակութային ժառանգութեան պահպանման եւ միջազգայնացման համար՝ ոլորտը ստորադասելով պաշտպանական խնդիրներին։ Այդուհանդերձ, 1994 թուականի մայիսեան հրադադարից ի վեր Արցախը ձեռնամուխ էր եղել յարաբերական խաղաղ պայմաններում նիւթական և ոչ նիւթական մշակութային ժառանգութեան պահպանման կազմակերպմանը, ինչը ամրագրուել էր համապատասխան օրէնսդրական կարգաւորումներով։ Նախորդ տարիներին պետութիւնը մշակոյթի ոլորտում իրականացրել է միջոցառումներ՝ մշակութային արժէքների պահպանման, քատրերու որակի ու սոցիալական վիճակի բարելաւման եւ ժառանգութեան մատչելիութեան ապահովման համար։ Յուշարձանների պահպանութեան ոլորտում Արցախի իշխանութիւնները 1994-2020 թուականների ընթացքում նախաձեռնել են հոգեւոր և աշխարհիկ կառոյցների (եկեղեցիներ, վանական համալիրներ, կոթողներ, ամրոցներ, ապարանքներ, կամուրջներ) հետազօտման եւ վերականգնման աշխատանքներ։

Պատերազմի ժամանակ ոչ նիւթական մշակութային ժառանգութեան պաշտպանութիւնն Արցախում մարդու իրաւունքների տեսանկիւնից։

Պատերազմի ընթացքում եւ դրանից յետոյ Արցախի ոչ նիւթական մշակութային ժառանգութեան պաշտպանութիւնը լիարժէք չի ապահովուել ոչ ազգային օրէնքներով, ոչ

էլ ՅՈՒՆԵՍԿՈՅի խորհրդաժողովներով: Այդ պատճառով դրա պաշտպանութիւնը պէտք է հիմնուի մարդու իրաւունքների նորմերի վրայ՝ ընդգծելով մշակութային ժառանգութեան եւ մշակութային իրաւունքների փոխկապակցուածութիւնը: Մշակոյթը, մշակութային ժառանգութիւնն ու իրաւունքները սերտօրէն փոխկապակցուած են՝ ոչ միայն ժառանգութեան պահպանման, այլեւ մշակութային իրաւունքների իրացման տեսանկիւնից: Դրանք ներառում են ազատ արտայայտման, լեզուի եւ սովորոյթների փոխանցման, ինչպէս նաեւ համայնքի մշակութային կեանքին մասնակցելու իրաւունքները: Նիւթական եւ ոչ նիւթական մշակութային ժառանգութեան հասանելիութիւնը եւ մշակութային կեանքին մասնակցելու իրաւունքը ամրագրուած են մարդու իրաւունքների միջազգային օրէնսդրութեամբ, ինչի մասին վկայում են նաև ՅՈՒՆԵՍԿՕն եւ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը: Պատերազմի հետեւանքով Արցախում խաթարուել է ժողովրդի մշակութային կենսագործունէութիւնը, ինչի արդիւնքում խախտուել են մշակութային հիմնարար իրաւունքները, որոնք ամրագրուած են Մարդու իրաւունքների հռչակագրի 27-րդ յօդուածում եւ «Մշակութային իրաւունքների Ֆրիբուրգի հռչակագրում»՝ որպէս մշակութային կեանքին մասնակցելու եւ ինքնութիւնը արտայայտելու իրաւունք: Ֆարոյի 2005 թ. խորհրդաժողովը մշակութային ժառանգութիւնը ներկայացնում է որպէս ժառանգութեանը կապուելու եւ անձնական փորձառութեամբ հարստացնելու հնարաւորութիւն: Ըստ բրիտանացի մշակութային իրաւունքի տեսաբան Կ. Հաուզլորի՝ մշակութային ժառանգութեան որևէ նմուշի միտումնաւոր ոչնչացումը խախտում է մշակութային ինքնութիւնը, սեփական լեզուի օգտագործման, կրթուելու եւ աւանդոյթներին համապատասխան զարգանալու իրաւունքները: Այսպիսով, պատերազմը խաթարեց արցախցու՝ իր մշակութային ինքնութեանը համապատասխան ապրելու իրաւունքը: Ազրպէյճանը ոտնահարելով Արցախի մշակութային ժառանգութիւնը՝ խախտեց արցախահայութեան մշակութային իրաւունքները, քանի որ համայնքներն ու անհատները զրկուեցին ժառանգութեանը մասնակցելու հնարաւորութիւնից: Տեղահանուածները չեն կարող մուտք գործել, մեկնաբանել կամ «կառուցել» իրենց ժառանգութիւնը: Պատերազմների ժամանակ ոչ նիւթական ժառանգութեան պաշտպանութիւնը ընդգրկում է ինչպէս արժէքները, այնպէս էլ այն մարդկանց ֆիզիքական ու մտաւոր ամբողջականութիւնը, որոնք մասնակցում են ժառանգութեան իրացմանը: Միջազգային մարդասիրական իրաւունքը պաշտպանում է ինչպէս անհատների, այնպէս էլ մշակութային ժառանգութիւնը, սակայն Ազրպէյճանը չի յարգում ո՛չ ժառանգութիւնը, ո՛չ էլ այն կրող մարդկանց իրաւունքները: Էթնոմշակութային և կրօնական խտրականութիւնը ժամանակակից պատերազմների հիմնական խնդիրներից է՝ համայնքներին դարձնելով խոցելի ոչ միայն ֆիզիքապէս, այլեւ մշակութային ինքնութեամբ: 2020 թ. Սեպտեմբերի 27-ին Ազրպէյճանի սանձազերծած պատերազմը Արցախի դէմ ուղեկցուեց էթնիկ զտման քաղաքականութեամբ՝ նպատակ ունենալով խաթարել արցախահայութեան սոցիալական միասնութիւնն ու ինքնութիւնը: Ոչ նիւթական մշակութային ժառանգութիւնը կարեւոր դեր ունի ինքնութեան, շարունակականութեան եւ սոցիալական համախմբման պահպանման գործում, սակայն

այն յատկապէս փխրուն է պատերազմի պայմաններում։ Ազրպէյճանը, վարելով հակահայ պետական քաղաքականութիւն, գրաւուած տարածքներում շարունակաբար ոչնչացնում եւ իւրացնում է հայկական մշակութային արժէքները՝ խախտելով Հաագայի և Ժընեւի խորհրդաժողովները։ Թիրախաւորուել են քրիստոնէական կառոյցներ եւ Արցախի ազատամարտին նուիրուած յուշարձաններ՝ նպատակ ունենալով ջնջել պատմական յիշողութիւնն ու յաղթանակի փաստը։ Այս գործողութիւնները վկայում են մշակութային ժառանգութեան եւ ինքնութեան ոչնչացմանն ուղղուած համակարգուած պետական քաղաքականութեան մասին, որի հետեւանքով վտանգւում է ոչ միայն արցախահայութեան, այլեւ համաշխարհային մշակութային ժառանգութեան մի մասը։ Գրաւուած տարածքներում մշակութային ժառանգութիւնը պաշտպանւում է միջազգային մարդասիրական իրաւունքով, որ կիրառւում է ինչպէս միջազգային, այնպէս էլ ոչ միջազգային հակամարտութիւններում։ Այն սահմանում է իրաւունքներն ու պարտականութիւնները զինուած հակամարտութեան ընթացքում, ներառում է Հաագայի եւ Ժընեւի խորհրդաժողովները եւ սովորութային նորմերը, եւ ապահովում է խախտումների համար պատասխանատուութիւն։ Այս իրաւունքը, հակադրելով բռնութեան գործադրման, պաշտպանում է մարդու հիմնարար իրաւունքները, այդ թւում՝ մշակոյթի իրաւունքը, եւ չի ընձեռում պետութիւններին թոյլտուութիւն վնասել անհատին կամ համայնքին։ Մշակութային ժառանգութիւնը մարդու ստեղծագործութեան բացառիկ արտայայտութիւն է, որի ոչնչացումը կամ վնասումը խախտում է այս իրաւունքները՝ թէ՛ պատերազմի ընթացքում, թէ՛ դրանից յետոյ։ Պատերազմի եւ հետպատերազմեան շրջանում Հայաստանի եւ Արցախի նախարարութիւնները պարբերաբար դիմել են՝UNESCO, ICOM, WMF, ICOMOS, BSI, ICCROM, EAA, ALIPH եւ այլ միջազգային կառոյցներին՝ կանխելու Արցախի մշակութային ժառանգութեան ոչնչացումը և անարգումը։ Պատերազմի ընթացքում հայկական մշակութային թիրախներից ամենայայտնին Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին էր, որ դատապարտուել է ՀՀ եւ ԱՀ կողմից, իսկ ՅՈՒՆԵՍԿՕն 2020 թ. Հոկտեմբերի 9-ին արտայայտեց մտահոգութիւն եւ կոչ արեց պահպանել Հաագայի 1954 թ. խորհրդաժողովի պարտաւորութիւնները։ WMF-ը դա գնահատեց որպէս անընդունելի, իսկ «The Art Newspaper»-ը ընդգծեց հայկական ինքնութիւնը կրող ժառանգութեան թիրախաւորումը։ Նոյեմբերի 9-ի հրադադարի պայմանագրից յետոյ ազրպէյճանական վերահսկողութեան տակ անցած տարածքներում բարբարոսութիւնը շարունակուեց, խախտելով ոչ միայն ներկաների, այլեւ գալիք սերունդների մշակութային իրաւունքները։ Մշակութային ժառանգութեան դիտաւորեալ ոչնչացումը դատապարտւում է ՅՈՒՆԵՍԿՈՅի 2003 թ. հռչակագրով, 1954 թ. խորհրդաժողովով, ՄԱԿի Անվտանգութեան խորհրդի 2347 (2017) բանաձեւով եւ Հռոմի կանոնադրութեամբ, որը սահմանում է դա որպէս միջազգային ռազմական յանցագործութիւն։ Միջազգային կառոյցների արձագանգը հիմնականում սահմանափակուել է մտահոգութեան մակարդակով, ինչը ընդգծում է անհրաժեշտութիւնը հայկական պետութիւնների փոխհամաձայնեցուած եւ ռեսուրսներով ապահովուած ռազմավարութեան մշակման՝ մշակութային ժառանգութիւնը պաշտպանելու համար։ 2020

թ. Սեպտեմբերի 27-ին Ազրպէյճանի սանձազերծած պատերազմը եւ դրանից յետոյ համայնքների բռնի տեղահանութիւնն ու խաղաղ բնակչութեան թիրախաւորումը ուղղուած էին արցախահայութեան ինքնութեան ոչնչացման։ Պատերազմը վնաս հասցրեց ոչ միայն նիւթական, այլեւ ոչ նիւթական ժառանգութեան՝ ծէսերին, սովորոյթներին, գիտելիքներին, հմտութիւններին եւ առօրեայ գործունէութեան։ Ոչ նիւթական ժառանգութեան պաշտպանութիւնը բախումների ժամանակ կենսական նշանակութիւն ունի՝ համայնքների ինքնութեան եւ շարունակականութեան պահպանման համար։ Մշակութային ժառանգութեան ամենախոցելի թիրախը հենց ոչ նիւթականն է, որը վնասւում է թէ՛ խաղաղ բնակչութեանը թիրախաւորելիս, թէ՛ համայնքների տեղահանման կամ նիւթական ժառանգութեան աւերման դէպքում։ Ազրպէյճանի եւ Թուրքիայի գործողութիւնները վկայում են ռազմավարական, գաղափարաբանօրէն մշակուած պետական քաղաքականութեան մասին՝ Հայաստանի եւ հայերի ինքնութիւնը ոչնչացնելու նպատակով։ Ազրպէյճանը անտեսում է Հաագայի եւ Ժընեւի խորհրդաժողովները եւ մշակութային ժառանգութիւնը դիտարկում որպէս հաշուեյարդարի առարկայ։ Արցախի մշակութային ժառանգութիւնը ոչ միայն համայնքի ինքնութեան եւ պատմութեան, այլեւ համաշխարհային քաղաքակրթութեան մաս է։ Արձանագրուած վնասը վերաբերում է ողջ մարդկութեան ժառանգութեան, ինչը ընդգծում է դրա միջազգային պաշտպանութեան անհրաժեշտութիւնը։